Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2017 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում փոփոխություններ կատարելու մասին հարցը:**

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

Զեկուցողը նշեց. ելնելով համալսարանում կատարված կադրային փոփոխություններից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975 - Ն որոշման հավելվածի 4-րդ կետի և 10-րդ կետի «դ)» ենթակետի պահանջները՝ անհրաժեշտություն է առաջացել կատարելու փոփոխություններ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի «Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ» բաժնում: Նա ներկայացրեց ֆակուլտետներից առաջադրված անձանց թեկնածությունները, որոնք, գիտական խորհրդի որոշմամբ, ցուցակով դրվեցին խորհրդի բաց քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի՝ «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975 - Ն որոշման հավելվածի 4-րդ կետին և 10-րդ կետի «դ)» ենթակետին համապատասխան, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ ընտրել հետևյալ անձանց.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը, գիտական աստիճանը և գիտական կոչումը
1.	**Գևորգյան Ռուզաննա Վլադիկի**	վիճակագրության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

2.	**Գրիգորյան Լիանա Հայկազի**	կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
3.	**Դադայան Լիլիթ Յուրիի**	մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4.	**Հայրապետյան Արկադի Նիկոլայի**	բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
5.	**Պետրոսյան Մարտիրոս Երվանդի**	աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
6.	**Սալնազարյան Աշոտ Բորիսի**	ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
7.	**Սահակյան Ռուզան Ալբերտի**	բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
8.	**Սարգսյան Արամ Հակոբի**	փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ ընտրված անձանց ցուցակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝ **Պ. Ա. Քալանթարյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

08.12.2017 թ.